«Արմավիրի Ռ. Եղոյանի անվան N1ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներիօգտագործումը գրականության դասերին

ԽՈՒՄԲ՝ Հայոց լեզու

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ռ.Պետրոսյան

ՄԵՆԹՈՐ՝ Հ.Պողոսյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

ԳԼՈՒԽ I

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ

ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ.....5

ԳԼՈՒԽ II

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴՆԵՐԸ,

ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ 9

ԱՄՓՈՓՈՒՄ 18

ՆԱԽԱԲԱՆ

Մանկավարժական տեխնոլոգիաները ուղղված են կրթության որակի բարձրացման խնդրի լուծմանը, որն իրականացվում է ուսումնական հաստատությունում ուսուցման գործընթացի կազմակերպման նորարարական միջոցների օգնությամբ: Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս իրականացնել ակտիվ, անձնային կողմնորոշում ունեցող ուսուցում, որը նպաստում է հաղորդակցական և գիտակցական զարգացմանը: Կարևորելով այս ամենը՝ այս աշխատանքում մենք կանդրադառնանք ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներին:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից և երկու գլուխներից: Առաջին գլխում խոսելու ենք ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների բնութագրիչների և դասակարգման մասին, երկրորդ գլխում անդրադառնալու ենք ուսուցման ժամանակակից մեթոդներին և գրականության դասին դրանց օգտագործմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է .

- պատկերացում տալ ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների համակարգի մասին՝ ներկայացնելով նրանց հնարավորությունները գրականության ուսուցման գործընթացում, նպաստելով ակտիվ ուսուցման ձևերի ներմուծմանը ուսուցման գործընթաց:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են.

- ներկայացնել ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները գրականության դասընթացում, նրանց տեսական, մեթոդաբանական և տեխնոլոգիական ասպեկտները ավանդական և անձնային կողմնորոշման ուսուցման պայմաններում,
- ծանոթանալ տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորություններին կրթական գործընթացում,
- գնահատել տեխնոլոգիաների կիրառելիության մակարդակը ժամանակակից ուսուցման գործընթացում,
- սովորողներին և ուսուցիչներին զինել մանկավարժական տեխնոլոգիաներով և համակարգերով,
- սովորողի մեջ ձևավորել գիտականորեն հիմնավորված մարդաբանական գաղափարախոսություն, այս տեսանկյունից նորարարական և ավանդական մանկավարժական համակարգերի վերլուծության կարողության զարգացում:

Այս ուսումնասիրության մեջ փորձել ենք ներկայացնել ժամանակակից ինտերակտիվ տեխնոլոգիաների յուրահատկությունները, քանի որ արդիականության պահանջներից ելնելով՝ այսօր դրանք մեծ պահանջարկ են վայելում, ուսուցման գործընթացը դարձնում են առավել ակտիվ, արդյունավետ ու հետաքրքիր: Այս տեխնոլոգիաներն առանձնանում են իրենց բազմազանությամբ և արդյունավետությամբ և մեծ պահանջարկ են վայելում մեր ժամանակներում:

ԳԼՈՒԽ I

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Ժամանակակից տեխնոլոգիան դասավանդողի գործողությունների հաջորդական, փոխկապակցված համակարգն է, որի նպատակը մանկավարժական այս կամ այն խնդրի լուծումն է:

Բացահայտելով «մանկավարժական տեխնոլոգիա» հասկացության էություն՝ ճապոնացի մտածող Տ. Սակամոտոն նշում է, որ մանկավարժական տեխնոլոգիան ենթադրում համակարգային մտածողություն, ինչը նպաստում է «ուսուցման, կրթության համակարգմանը»: Այսինքն՝ կարող են ասել, որ ուսուցման նկատմամբ համակարգային մոտեցումը «մանկավարժական տեխնոլոգիա» հասկացության էական բնութ Տեխնոլոգիայի ընտրության ժամանակ շատ կարևոր է նպատա-կադրումը՝ այսինքն՝ ինչ նպատակի համար և ինչ արդյունք ստանալու համար է իրագործվում ծրագիրը: Նպատակից է կախված ընտրվող տեխնոլոգիայի բնույթը : Այսպիսով՝ մանկավարժական տեխնոլոգիաների ճիշտ տեղին և ժամանակին կիրառությունը կախված է նաև մասնագետի, մանկավարժի կոմպետենտությունից, անհատական մոտեցումից, նյութի բնույթից նաև իրավիճակն օբյեկտիվ գնահատելու կարողությունից:

Ժամանակակից դիդակտիկայում ներկայացված են մանկավարժական տեխնոլոգիաների մի շարք դասակարգումներ: Մենք կանդրադառնանք խաղային, համագործակցային և նախագծային տեխնոլոգիաներին:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա: Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան ըստ կիրառման եղանակի ընդհանուր մանկավարժական տեխնոլոգիա է, որի հիմքում մարդասիրական մանկավարժության դրույթներն են: Համագործակցային ուսուցման հիմքում տարբեր ուսումնական իրավիճակներում սովորողների համատեղ ակտիվ գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման գաղափարն է: Սովորողները միավորվում են խմբերում, նրանց տրվում է առաջադրանք, ընդ որում յուրաքանչյուրը պատասխանատու է ոչ միայն իր, այլև ամբողջ խմբի աշխատանքի արդյունքի համար: Այդ պատճառով էլ ավելի թույլ առաջադիմություն ունեցող սովորողները ձգտում են սովորել: Արդյունքում աշխատում է ամբողջ դասարանը, քանի որ առաջադրված խնդրին միասնական լուծում են տալիս:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը ուսուցչին հնարավորություն է տալիս ստեղծագործաբար մոտենալ ուսուցման գործընթացին, դասավանդվող առարկային, սովորողներին, նպաստում նրա մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության դրսևորմանը:

Համագործակցային ուսուցման սոցիալական արդյունքը անձի զարգացումն ու անհատականության ձևավորումն է: Համագործակցային ուսուցման տարրերն են՝

- դրական փոխկախվածությունը,

- դեմառդեմ փոխազդեցությունը,
- անհատական հաշվետվությունն ու պատասխանատվությունը,
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտությունները,
- խմբային գործընթացը,
- փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի հիմքում խմբերի ձևավորումն է որոշակի մշակված սկզբունքներով:Համագործակցային խմբերը ձևավորվում են մի քանի եղանակով՝

- համասեռ՝ աշխատանքային կարողությունները համազոր են,
- պատահական՝ խումբը կազմվում է պատահական՝ վիճակահանությամբ, հաշվելով, կտրտված բացիկներով և այլն,
- ըստ հետաքրքրությունների կամ ինքնակամ,
- տարասեռ՝ ընդգրկված են տարբեր՝ ուժեղ, միջին, թույլ կարողություններով աշակերտներ:

Առանձնացվում է համագործակցային ուսուցման խմբերի հետևյալ տեսակներ.

- Համագործակցային ֆորմալ խումբ – փոքր խմբեր են /երկուսից չորս անդամ/, կարող են գործել մեկ դասաժամից մինչև մի քանի շաբաթ և իրականացնել որևէ առաջադրանք:
- Համագործակցային ոչ ֆորմալ խմբեր – ժամանակավոր գործող խմբեր են, որոնց գործունեությունը կարող է տևել մի քանի րոպեից մինչև դասաժամի ավարտը:
- Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր - կայուն անդամներով երկարաժամկետ, տարասեռ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի կամ ծրագրի շրջանակներում:

Ուսուցիչը ինքն է որոշում թե տվյալ թեմայի շրջանակներում ինչպիսի խմբեր կարելի է ձևավորել, ինչ խոսք, կարևորվում է նաև սովորողների զարգացվածության աստիճանը, խմբում աշխատելու ցանկությունը:

Համագործակցային տեխնոլոգիայում կիրառվող մեթոդներից և

և հնարները շատ են: Նշենք մի քանիսը.

- Թիմային առաջադիմություն
- Խճանկար
- Պատկերասրահում
- Խմբային հետազոտություն
- Կենտրոններով աշխատանք
- Լրագրերով աշխատանք
- Պոեզիա
- Բառիմաստի կռահում և այլն:

Խաղային ինտերակտիվ տեխնոլոգիաներ

«Տո՛ւր մարդուն մի ձուկ, և նա կուշտ կլինի մեկ օր: Սովորեցրո՛ւ մարդուն ձուկ բռնել, և նա կուշտ կլինի ամբողջ կյանքում»:

Ցանկացած մանկավարժական տեխնոլոգիա պարունակում է միջոցներ, որոնցով ակտիվացվում և ինտենսիվանում են սովորողների գործունեությունները, սակայն կան տեխնոլոգիաներ, որոնցում այդ միջոցները ներկայանում են որպես հիմնական գաղափարի արտահայտիչներ և արդյունավետության երաշխավորն

Ուսուցման պրակտիկայում հատկապես վերջին տասնամյակներին լայնորեն կիրառվում են այնպիսի տեխնոլոգիաներ, որոնց հիմքում ընկած է խաղային մոդելավորումը: Այս տեխնոլոգիաներն առանձնանում են իրենց բազմազանությամբ և արդյունավետությամբ և մեծ պահանջարկ են վայելում մեր ժամանակներում:

Ցանկացած մանկավարժական տեխնոլոգիա պարունակում է միջոցներ, որոնցով ակտիվացվում և ինտենսիվանում են սովորողների գործունեությունները, սակայն կան տեխնոլոգիաներ, որոնցում այդ միջոցները ներկայանում են որպես հիմնական գաղափարի արտահայտիչներ և արդյունավետության երաշխավորներ: Այսպիսիների շարքին են դասվում կանխող-հեռանկարային /Լիսենկովայի/, խաղային, պրոբլեմային, ծրագրավորված, անհատական և այլ տեխնոլոգիաները: Խաղային ինտերակտիվ տեխնոլոգիաների հնարավորությունները բավական լայն են: ա. Դրանք թույլ են տալիս ընդգրկել հիմնախնդիրների լայն ասպեկտ: բ. Համապատասխանում են գործունեության տրամաբանությանը: գ. Նպաստում են ուսումնական գործընթացի մասնակիցների՝ առավել մեծ թվով ընդգրկմանը, նրանց մղում են հանպատրաստից ակտիվության: դ. Ավելի հեշտությամբ են հաղթահարվում կարծրատիպերը, շտկվում է ինքնագնահատականը: ե. Հնարավորություն են ստեղծում համակողմանի վերլուծություններ, մեկնաբանություններ կատարելու և ստացված արդյունքները իմաստավորելու: զ. Նպաստում են անձի բոլոր որակների՝ անհատական դրական և բացասական ընդունակությունների արտահայտմանը և այլն: Բացի այդ, խաղային տեխնոլոգիաների նպատակները համաձայնեցվում են սովորողների պրակտիկ պահանջմունքներին: Խաղը՝ զուգակցված աշխատանքի և ուսուցման հետ, ոչ միայն երեխաների, այլև չափահասների գործունեության որոշակի տեսակ է: Կյանքում խաղային գործունեությունը կատարում է մի շարք գործառույթներ՝ - զվարճալի (հաճույք է պատճառում, ոգևորում, հետաքրքրություն առաջացնում), - ինքնահաստատման, - թերապևտիկ (խաղային դժվարությունների հաղթահարումը, որոնք համընկնում են նաև կենսական դժվարություններին), - կանխատեսող (խաղի գործընթացում կարելի է ճանաչել իրեն, ի ցույց դնել սեփական թաքնված ուժերը), - կոռեկցիոն-վերականգնողական /խաղային պրակտիկայում փոխվում են անձնային որակները, տեղի է ունենում անձի սոցիալականացում/: Խաղը՝ որպես ուսուցման մեթոդ և ավագ սերնդի՝ հաջորդ սերնդին փորձի փոխանցման միջոց, կիրառվել է դեռևս հին ժամանակներում: Ժամանակակից դպրոցում խաղային գործունեությունը իրագործվում է հետևյալ դեպքերում. - որպես ինքնուրույն տեխնոլոգիա, - որպես մանկավարժական տեխնոլոգիայի բաղադրիչ, - որպես դասի կազմակերպման ձև: Խաղային տեխնոլոգիաների տեղն ու դերը ճիշտ արժեքավորելու համար ուսուցիչները պիտի քաջ գիտակցեն խաղի գործառույթները:

Դիդակտիկական խաղերի արդյունավետությունը առաջին հերթին կախված է նրանց օգտագործման սիստեմատիկությունից, ապա նաև՝ խաղային ծրագրերի նպատակաուղղվածությունից ու դրանք դիդակտիկական վարժություններին զուգակցելու հմտությունից: Երեխաները և ընդհանրապես սովորողները հեշտությամբ են ներգրավվում խաղային գործունեության ոլորտ, և ինչքան այն բազմազան է, այնքան ավելի գրավիչ է դառնում: Խաղային գործունեության մեջ մտնում են խաղեր և վարժություններ, որոնք զարգացնում են առարկաների բնույթը, բնութագրիչ հատկանիշները բացահայտելու, դրանք իրար հետ համեմատելու և համադրելու կարողությունները: Խաղերը նաև թույլ են տալիս տարբերել իրական երևույթները անիրականից, զարգացնում են ինքնատիրապետումը, ռեակցիայի արագությունը, երաժշտական լսողությունը և այլն: Բոլոր գործնական խաղերի տեխնոլոգիան կազմված է մի քանի փուլերից.

1. Նախապատրաստական: Այս փուլի մեջ մտնում է սցենարի մշակումը, պարապմունքի նպատակի որոշումը, առաջադրված խնդրի հիմնավորումը, գործնական խաղի պլանի մշակումը, գործող անձանց բնութագրումը և այլն:

2. Մուտք խաղի մեջ: Հայտարարվում են մասնակիցների անունները, խաղի պայմանները, փորձաքննողների անունները, գլխավոր նպատակը, հիմնավորվում է իրադրությունների ընտրությունը: Առաջադրվում են նաև չափորոշիչները, կանոնները և դրույթները:

3. Խաղի գործընթացը: Խաղն սկսվելուն պես ոչ ոք իրավունք չունի միջամտելու կամ որևէ բան փոխելու: Միայն խաղավարն է իրավասու մասնակիցների գործողությունները վերահսկելու և կարգավորելու, եթե նրանք հեռանում են գլխավոր նպատակից կամ շեղվում են խաղի կանոններից:

4. Խաղի արդյունքների վերլուծություն և գնահատում: Արտահայտվում են փորձաքննիչները, կարծիքներ փոխանակում, իսկ խաղի մասնակիցները կարող են պաշտպանել և պարզաբանել իրենց գործողությունները:

Վերջնական փուլում ուսուցիչը նշում է ձեռքբերումների ու խաղի արդյունքների և թույլ տրված սխալների մասին և ամփոփում պարապմունքի վերջնական արդյունքը: Գոյություն ունեն խաղային ինտերակտիվ տեխնոլոգիաների մի քանի տեսակներ՝ գործնական, նմանակող /իմիտացիոն/, գործառական և դերային: Գործնական խաղերը դպրոց են մուտք գործել մեծահասակների կյանքից: Դրանք կիրառվում են նոր նյութի յուրացման գործընթացում և զարգացնում են ստեղծագործական կարողությունները: Խաղը հնարավորություն է ընձեռում հասկանալու և ուսումնասիրելու ուսումնական նյութը տարբեր տեսանկյուններից: Նմանակող /իմիտացիոն/ խաղերի ժամանակ նմանակում են որևէ կազմակերպության կամ արտադրության գործունեությունը: Կարող են նմանակվել դեպքերը, մարդկանց գործունեության կոնկրետ տեսակները /գործնական հանդիպում, պլանի քննարկում, զրույցի անցկացում և այլն/: Գործառական /օպերացիոն/ խաղերը օգնում են մշակելու կոնկրետ սպեցիֆիկ գործառություններ իրականացնելու, օրինակ՝ հասարակական ելույթներ ունենալու,

քարոզչություն իրականացնելու հմտությունները, շարադրություններ գրելու կարողությունները և այլն: Այսպիսի խաղերը կազմակերպվում են իրականին մոտ պայմաններում:

Նախագծերի մեթոդը ուսուցման համակարգ է, որի ընթացքում սովորողները գիտելիքներ, կարողություններ, հմտություններ են ձեռք բերում աստիճանաբար բարդացող գործնական նախագծերի պլանավորման և իրագործման ընթացքում: Համաշխարհային մանկավարժության մեջ այս մեթոդը նոր երևույթ չէ.Մեթոդի ի հայտ գալը կապվում է Ջոն Դյուիի անվան հետ, երբեմն անվանում են նաև հիմնախնդիրների մեթոդ:

Նախագծերի մեթոդն իր նշանակությամբ կարևոր տեղ է զբաղեցնում ուսուցման ժամանակակից մեթոդների շարքում, 21-րդ դարի նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներից է, որը թույլ է տալիս անհատականացնելու ուսումնական գործունեությունը, սովորողներին հնարավորություն է տալիս դրսևորելու ինքնուրույնություն իրենց գործունեության պլանավորման հարցում, տեխնոլոգիա է, որը ներառում է բազմաթիվ այլ մեթոդներ:

Նախագծային մեթոդի առանձնահատկությունն այն է, որ ուսուցումը կազմակերպվում է սովորողների նպատակային գործունեության միջոցով, ընդգծվում է կապը սովորողների կյանքի և առօրյայի հետ, ուսումնասիրության հիմնախնդիրները բխում են իրական կյանքից: Այս դեպքում անպայման կապահովվեն սովորողների հմտությունների, կարողությունների զարգացումը, տեղեկատվական դաշտում ճիշտ կողմնորոշվելու, քննադատական մտածողության զարգացումը: Փորձն ապացուցում է, որ նախագիծ մշակող և իրագործող սովորողները կարողանում են աշխատել խմբում, համագործակցել ընկերների հետ, կոնկրետ այս կամ այն խնդիրը լուծելու համար կիրառել տարբեր ոլորտներից ձեռք բերած իրենց գիտելիքները:

Ուսումնական նախագիծն ունի իր իրականացման փուլերը.

հիմնահարցի ձևակերպում

աշխատանքային խմբի (խմբերի) ձևավորում

աշխատանքի բաժանում

խմբերի, անհատների ինքնուրույն աշխատանք

հետազոտություն

ստացված արդյունքների ընթացիկ քննարկումներ

կատարված աշխատանքների ներկայացում

- նախօրոք որոշվում է ներկայացման ձևը՝ տեսանյութ, ֆոտոշարք, հոդված

սովորողների և խմբի աշխատանքների գնահատում

- գնահատումը կատարվում է և՛ դասավանդողի, և՛ սովորողների կողմից

- գնահատվում է յուրաքանչյուր սովորող

- գնահատվում է ամբողջ խումբը

- հետագա աշխատանքի ուղիների նախանշում

Այստեղ նախագծի բուն նպատակներից մեկը սովորողի մեջ ուսումնասիրվող նյութի վերաբերյալ հետաքրքրություն առաջ բերելը և դրան գնահատական տալն է: Ճամփորդությունը պետք լինի նպատակաուղղված, զարգացնի սովորողի ճանաչողական ունակությունները, նպաստի բարոյական հատկանիշների ձևավորմանը, առաջացնի սեր հայրենիքի, նրա մշակույթի, պատմության, ինչպես նաև հարգանք հարևան ժողովուրդների նկատմամբ:

Նախագծի իրականացման ժամանակ անպայման աշխատում ենք կիրառել սովորողների՝ տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները: Այս խնդիրը հեշտ է լուծվում, եթե աշխատանքի բաժանումը կատարելիս ուղղորդվում ենք տարբեր առարկաներից սովորողների պատրաստվածության հաշվառմամբ:

ԳԼՈՒԽ II

ՄԵԹՈԴՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿՕԳՆԵՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՐՁՆԵԼ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ

Անհերքելիորեն ապացուցված է, որ ինչքան շատ զգայարաններ են մասնակցում ուսուցման գործընթացին, այնքան արդյունավետ է ընթանում այն: Իսկ որքան արդյունավետ է ուսուցումը, այնքան հաստատուն են նրանից ստացած գիտելիքներն ու հմտությունները: Այս առումով շատ ուսուցիչներ ձգտում են մատուցվող նյութը դարձնելու հնարավորին չափ տեսանելի, լսելի, շոշափելի, զննելի: Այդ դեպքում արդեն անվիճելի է միջառարկայական կապերի օգտագործման պահանջը: Գրականությունը պատկերում է մարդուն՝ իր բազմաբովանդակ կյանքով, ողջ էությամբ, ուստի գրական երկերի ուսումնասիրման ընթացքում շատ լուրջ ուշադրություն է դարձվում հերոսների, գործող անձանց, նրանց հոգեկան ապրումների, ներաշխարհի ու գործելակերպի բացատրման ու բնութագրման վրա: Գրականության ուսուցման ընթացքում աշակերտների մեջ ձևավորվում են ոչ միայն վեհ գաղափարներ, հայացքներ, տեսակետներ, այլև հաստատուն համոզմունքներ, մարդկային լավագույն հատկություններ, գեղարվեստական ճաշակ, գեղեցկի զգացում. նրանք դաստիարակվում են համամարդկային արժեքներով, բարոյապես ու գեղագիտորեն: Ուսուցումը արգասավոր ու հետաքրքրական է լինում նաև այն ժամանակ, երբ հենվում է ոչ թե վերացական ըմբռնումների ու հասկացությունների, այլ կոնկրետ գաղափարների, իրական առարկաների ու երևույթների վրա: Այդ կերպ ուսուցումը օժտվում է զննական մեծ ուժով: Մարդու հիշողության մեջ առանձնապես պահ պանվում են այն պատկերները, որ մենք ընկալում ենք ինքներս անմիջական հայեցողության միջոցով, և որ մեր մեջ թափանցած այդպիսի մի պատկերի հետ մենք հեշտությամբ ու հաստատապես կապակցում ենք նույնիսկ վերացական գաղափարները, որոնք առանց դրա կմոռացվեն: Մանկան կամ պատանու և ընդհանրապես մարդու էությունը ակնհայտորեն զննականության կարիք ունի: Գրականության ուսուցման համար կարևոր նշանակություն ունի թե՛ անմիջական, թե՛ միջնորդական զննականությունը: Գրականության՝ որպես խոսքի արվեստի, ուսուցումը զննական մեծ ուժով է օժտում մանավանդ կենդանի խոսքը՝ գեղեցիկ ասմունքը, ընթերցումը, տրամախոսությունը և այլն: Ուսումնական նպատակով ցուցադրվող պատկերազարդումներում, կինոֆիլմերում միահյուսվում են զննականության բոլոր տեսակները: Ուստի դրանց օգտագործումը գրականության ուսուցման ընթացքում ուսումնասիրվող նյութը զննական է դարձնում ավելի խորը ու բազմակողմանի կերպով: Գրականության դասն առավել տեսանելի և արդյունավետ է դառնում, երբ ուսուցիչը տվյալ հեղինակի ստեղծագործությունն ուսումնասիրելիս աշակերտներին մատուցում է նաև թեմային առնչվող կերպարվեստի, քանդակագործության նմուշներ, երաժշտական ստեղծագործություններ:

Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես

կնպաստի դասի արդյունավետ ընթացքին: Ներկայացնենք դասը սկսելու մի քանի հնարներ:

Զարմանք, անսպասելիություն: Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը: Հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է: Այս համատեքստում կարելի է օգտագործել հակափաստական մտածողությունը: Վերջինս ձևակերպվում է պատկերում արտացոլված ոճով:

Մեկ այլ տարբերակ է աշակերտների կողմից ուրիշի դեր ստանձնելը: Օրինակ՝ պատկերացրեք դուք Փոքր Միերն եք: Ինչպե՞ս կվարվեիք, ե՞րբ դուրս կգայիք քարայրից:

Նոր նյութը բացատրելիս կարևոր է «սատանայի վկա» հնարի հաճախակի կիրառումը: Այս դեպքում ուսուցիչը միտումնավոր սխալ միտք է ասում, որպեսզի ստուգի, թե որքան ուշադիր է դասարանն իրեն լսում: Իհարկե, սխալը պետք է լինի աշակերտների արդեն իմացած նյութի շրջանակում: Հաճախ ուսուցիչներին թվում է, թե այդ դեպքում աշակերտները կարող են մտածել, որ իրենց ուսուցիչը չի տիրապետում նյութին և սխալ բաներ է ասում: Բայց մի քանի անգամ կիրառելուց հետո աշակերտները կհասկանան, որ դա մանկավարժական հնար է: «Սատանայի վկա» հնարի կիրառումը աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու լավ մեթոդ է: Օրինակ որևէ երկ վերլուծելիս կարելի է դադար տալ և ստուգել, թե որքան ուշադիր են լսում:

Կենտրոններով աշխատանք: Ստեղծվում են 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին: /Խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբին համապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային՝ համագործակցություն, որոշակի աշխատանքներում կարողությունների և հմտությունների խորացում, այնպես էլ պատահականության սկզբունքով/: Կենտրոններ. • հետազոտողների կենտրոն • ստեղծագործողների կենտրոն • գրավոր աշխատանքի կենտրոն • բացահայտողների կենտրոն: Ուսուցիչը կարող է իր հայեցողությամբ ավելացնել կամ պակասեցնել կենտրոնների թիվը՝ փոխելով կամ հարմարեցնելով անունները:



Բացահայտողների կենտրոն: Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը, կատարում նշումներ, վեր հանում վերջինիս հիմնական միտքը, ենթատեքստը և ներկայացնում ընկերներին: Հետազոտողների կենտրոն Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և օգտվելով այդ պահին ձեռքի տակ եղած այլ աղբյուրներից՝ համացանց, գրականություն, փորձում են լրացուցիչ հետաքրքիր նյութեր հայթայթել տեքստի վերաբերյալ: Ստեղծագործողների կենտրոն Մասնակիցները, տեքստի առանձնահատկություններից ելնելով, փորձում են այն որևէ կերպ վերարտադրել և ներկայացնել, օրինակ՝ բեմականացում, պաստառի պատրաստում, նկարազարդում, երգ, պար և այլն: Գրավոր աշխատանքի կենտրոն Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը և իրականացնում լեզվական կամ բառային աշխատանք՝ պահանջին համապատասխան:

Այս մեթոդը արդյունավետ կլինի օրինակ Հովի. Թումանյանի «Փարվանա» բալլադը անցնելիս: Բացահայտողները ընթերցում են տեքստը, ներկայացնում, հետազոտողները լրացուցիչ տեղեկություններ են հավաքում նյութի վերաբերյալ օրինակ՝ Փարվանա լճի վերաբերյալ, ստեղծագործողները բեմականացնում են բալլադը, կամ պաստառ պատրաստում, գրավոր աշխատանք կատարողները բացատրում են անծանոթ բառերը:

Ստեփան Զորյանի կյանքն ու ստեղծագործությունն անցնելիս 6-րդ և 7-րդ դասարանցիները դասաժամերի մի մասն անց են կացնում գրողի տուն-թանգարանում, լինում իր խնձորի այգում, աշնանը համտեսում արևաբույր խնձորը, որի համն այլևս իր հետ է մնում և ամեն անգամ արթնանում Զորյանի գործերն ընթերցելիս:

Սովորածը պարզելու համար կարելի է կիրառել «Կիսատ նախադասություն» մեթոդը:

Կիսատ նախադասություն

ԵՍ ԱՅՍՕՐ ՍՈՎՈՐԵՑԻ…

ԻՆՁ ԶԱՐՄԱՑՐԵՑ…

ԱՅՍ ԴԱՍԻՑ ՀԵՏՈ ԵՍ ԶԳՈՒՄ ԵՄ…

ՄԻ ԲԱՆ, ՈՐ ՉՀԱՍԿԱՑԱ…

ԱՅՍ ԴԱՍԻ ԺԱՄԱՆԱԿ ԻՆՁ ԱՄԵՆԱՇԱՏԸ ԴՈՒՐ ԵԿԱՎ…

ԱՅՍՕՐՎԱ ԴԱՍԻ ԱՄԵՆԱՕԳՏԱԿԱՐ ԲԱՆԸ…

ԱՅՍ ԴԱՍԻՑ ԱՎԵԼԻ ԿՍՈՎՈՐԵԻ, ԵԹԵ…

ՄԻ ԲԱՆ, ՈՐ ԿՈՒԶԵԻ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԼ …

Պատկերում բերված կիսատ նախադասությունների լրացումն օգնում է աշակերտներին ամփոփել դասը: Իր ընտրությամբ, ուսուցիչը կարող է տալ այս նախադասություններից մի քանիսը կամ բոլորը՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով իրենց ցանկությամբ ընտրել այն կիսատ նախադասությունները, որոնք կուզենան ավարտել:[1] Այս մեթոդը ավելի արդյունավետ կլինի մեծ ծավալով գործերը յուրացնելիս: Օրինակ՝ 7-րդ դասարանում Ա.Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքն անցնելիս: Այս դասը անցնելիս զարմանալի կլինեն Սիմոնի արարքները, Ցոլակին բանակ տանելը տխուր զգացումներ կառաջացնի, ավելին կուզենան իմանալ ժամանակաշրջանի մասին, կառանձնացնեն ամենաօգտակար բանը, ասենք՝ սերը և գնահատանքը հասարակ ձիու նկատմամբ, վերջինիս դերը Սիմոնի ընտանիքում և այլն:

Խճանկար (Jigsaw reading) – Սովորողները բաժանվում են խմբերի, նրանց տրվում են տեքստի տարբեր հատվածներ: Հատկացվում է որոշ ժամանակ տեքստի բովանդակությանը ծանոթանալու համար: Ապա յուրաքանչյուր խմբից ընտրվում է մեկը, և կազմվում է հավաքական խումբ: Վերջում միասին փորձում են վերականգնել տեքստը:

Սա կարելի է կիրառել 7-րդ դասարանում Հ. Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» անցնելիս:

---

[1] Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ, էջ՝ 40:

Գլուխկոտրուկ (Reading puzzles) – Առաջադրանքը նման է նախորդին, բայց նաև առանձնանում է: Սովորողներին տրվում են թերթիկներ՝ տեքստերի առանձին հատվածներ: Պահանջվում է ճիշտ և ամբողջական դարձնել տեքստը: Օրինակ՝ բաժանվում են խառը դասավորությամբ բազմաթիվ էլեկտրոնային նամակներ ենթադրենք Ե. Չարենցի մասին հուշերից: Սովորողները, բովանդակությունից ելնելով, պետք է ճիշտ դասավորեն դրանք: Կամ նրանց տրվում է երկու տարբեր պատմությունների իրար միացրած տարբերակը, և նրանք պետք է վերականգնեն դրանք առանձին–առանձին:

Լրագրերով աշխատանք – Լրագրերի միջոցով կատարվող վարժությունները բազմազան են: Մենք կարող ենք ներմուծել «Համապատասխանեցում» (Matching) վարժության տարբերակներ, օրինակ՝ սովորողներից պահանջվում է համապատասխանեցնել հոդվածը վերնագրի կամ նկարի հետ: Մեկ այլ պարագայում սովորողներին հանձնարարվում է ընթերցել նույն թեմային վերաբերող տեղեկատվությունը՝ վերցված տարբեր լրագրերից, նշելու առկա տարբերությունները: Կարելի է նաև լրագրերի հոդվածները օգտագործել որպես սովորողների գրավոր խոսքը խթանող միջոց, այսպես, նրանց հանձնարարվում է ակնարկ գրել հոդվածն ընթերցելուց հետո: Սա կարելի է կիրառել գրողների կենսագրություններն անցնելիս:

Պոեզիա – Խմբի անդամներին բաժանվում է բանաստեղծության մեկական տող: Նրանք պետք է բարձրաձայն ընթերցեն, որից հետո տողերը ճիշտ դասավորելով՝ փորձեն ամբողջացնել բանաստեղծությունը: Այս տարբերակը կարելի է կիրառել 9-րդ դասարանում, «Արտաշես և Սաթենիկ» վիպերգի չափածո հատվածներն անցնելիս: Օրինակ՝

1) Հեծավ արի արքա Արտաշեսը գեղեցիկ Սևուկը (ձին),
2) Եվ հանեց ոսկեօղ շիկափոկ պարանը,
3) Եվ որպես սրաթև, արծիվ անցկացավ գետը,
4) Եվ նետեց ոսկեօղ շիկափոկ պարանը,
5) Գցեց մեջքը ալանաց օրիորդի,
6) Եվ շատ ցավեցրեց մեջքը փափուկ օրիորդի,
7) Արագ հասցնելով բանակը իր:

Բառիմաստի կռահում – Սովորողներին տրվում են տեքստային բառեր: Խմբեր կազմելով՝ նրանք պետք է կռահեն տեքստի իմաստը մինչև ընթերցելը: Ապա կարդում են տեքստը և պարզում, թե որ խումբն է ավելի ճիշտ կռահել: Իհարկե, առավել ճիշտ կլինի սովորողներին առաջադրել ոչ թե առանձին բառեր, այլ ամբողջական արտահայտություններ, այնուհետև պահանջել, որ այդ արտահայտություններն օգտագործեն համապատասխան իրավիճակներում:

Տարբեր պատասխաններ – Հետընթերցանական վարժությունները բազմազան են: Դրանք կոչված են զարգացնելու նաև սովորողների ստեղծագործական–

վերարտադրողական կարողությունները: Այս կապակցությամբ լայն տարածում ունեն համատեքստային հարցերին պատասխանելը, տեքստում առանցքային բառեր, արտահայտություններ գտնելը: Զուգահեռաբար, կարելի է կիրառել հետևյալ վարժությունը, այսպես, եթե տեքստը ներառում է հետաքրքիր փաստեր կամ տեղեկատվություն, ապա արդյունավետ կլինի սովորողներին հանձնարարել այդ նյութի հիման վրա կազմել աղյուսակներ կամ գծապատկերներ: Ճիշտ կլինի նկարագրել տեքստի հերոսներին, նրանց փոխհարաբերությունները:

Այժմ ներկայացնենք դասի մեկ օրինակ.

Դասարանը՝ 10-րդ
Տևողությունը՝45 րոպե
Առարկան՝ հայ գրականություն
Դասի թեման՝ Խ.Աբովյան «Վերք Հայաստանի»
Դասի նպատակները՝

Ակադեմիական

Սովորողը.

կիմանա վեպի ստեղծման շարժառիթների մասին,

կբնութագրի ժամանակաշրջանը,

կծանոթանա հայոց լեզվի զարգացման փուլերին,
կկարևորի աշխարհաբարի տարածման անհրաժեշտությունը:

Սոցիալական

Սովորողը .
կզարգացնի խմբում աշխատելու կարողությունները,

կընդլայնի խմբի անդամների հետ հաղորդակցվելու ձևերը:

Կիրառվող մեթոդները՝ «Զարմանք», անսպասելիություն, «Կիսատ նախադասություններ», «Կենտրոններով աշխատանք»:

Դասի ընթացքը՝ ԽԻԿ համակարգով

Խթանման փուլ- Ուսուցիչը կիրառում է «Զարմանք» մեթոդը: Նա հարցնում է՝ ի՞նչ կլիներ, եթե մինչև օրս տիրապետող լիներ գրաբարը: Հնչում են տարբեր պատասխաններ ուսուցչի ուղորդմամբ: Ուսուցիչը կարող է հիշեցնել կլասիցիստ հեղինակների կաղապարված և խրթին ստեղծագործությունները:

Իմաստի ընկալում- Ուսուցիչը պետք է հաղորդի նոր դասը: Նա կիրառում է «Կենտրոններով աշխատանք» մեթոդը: Ստեղծվում են 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են վեպի «Հառաջաբան»-ից հատվածներ և մոտենում

համապատասխան անվանումներով կենտրոններին: Կենտրոններ. հետազոտողների կենտրոն. այս խումբը հետազոտում, վերլուծում, բացատրում է նյութը: Ստեղծագործողների կենտրոն. այս խմբի անդամները մեկնաբանում են նյութը, գրում են փոքրիկ շարադրանք՝ կարևորելով վեպի դրույթները: Գրավոր աշխատանքի կենտրոն. այս խմբի անդամները կազմում են հարցաթերթիկներ և բացատրում անծանոթ բառերը: Բացահայտողների կենտրոն. այս խմբի անդամները ձեռքի տակ եղած ինտերնետային միջոցներից հավաքագրում են հետաքրքրիր փաստեր լեզվի զարգացման շրջանների և Խ.Աբովյանի գործունեության վերաբերյալ:

Կշռադատման փուլ- Այս փուլում ուսուցիչը կիրառում է «Կիսատ նախադասություններ» հնարը՝ պարզելու համար, թե որքանով են աշակերտները հասկացել դասը: Տրվում են կիսատ նախադասություններ, սովորողը պետք է լրացնի, թե ի՞նչ է սովորել, ինչի՞ց է զարմացել և այլն:

Այսպիսով՝ կրթական գործունեության մեջ փոխվում է շեշտադրումը՝ ուսուցչակենտրոնից դեպի անձնակենտրոն և դասավանդումից դեպի սովորողի ինքնուրույն ճանաչողական գործունեություն: Մանկավարժական և մեթոդական գրականության մեջ կրթության գործընթացում տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման մի քանի ուղղություն է նշվում, որոնցից պրակտիկայում առավել կիրառելի է.

- համակարգիչը՝ որպես գիտելիքների ստուգման միջոց,
- լաբորատոր գործնական աշխատանք՝ համակարգչային մոդելավորման կիրառմամբ,
- տեխնոլոգիաները՝ որպես ցուցադրման միջոց նոր նյութը բացատրելու ընթացքում,
- անհատական համակարգիչը՝ որպես ինքնակրթության միջոց:

Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը շատ կարևոր է ուսուցումն անհատականացնելու համար: Սովորողները պետք է կարողանան ձեռք բերել, գնահատել, արժևորել և փոխանցել տեղեկությունները, այս դեպքում տեխնոլոգիաները նպաստում են, օրինակ, որ սովորողները բանավիճեն, քննարկեն, սեփական կարծիք արտահայտեն և այլն: Տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ զարգանում են սովորողների մտածողությունն ու համակարգչային գրագիտության հմտությունները, օրինակ՝ համակարգչով գրելու դեպքում սովորողներն ավելի ինքնավստահ են: Տեխնոլոգիան կարող է նաև զարգացնել սովորողների գեղարվեստական հմտությունները. տեսաժապավենների ստեղծումը, թվային լուսանկարչությունը և այլ միջոցներ նպաստում են սովորողների գործունեության գեղարվեստական արտահայտչականության բարձրացմանը: Այն սովորողներին հնարավորություն է տալիս իմաստալից աշխատանք կատարելու: Սովորողները կարիք ունեն ստեղծելու այնպիսի օգտակար հետազոտական աշխատանքներ, որոնք կարևոր արժեք կունենան նաև ուսումնական հաստատությունից դուրս: Տեխնոլոգիաների վրա հիմնված մեթոդները կարող են օգնել դասավանդողին՝

հնարավորություն տալով նրան խնայելու ժամանակը և ջանքերը ներդնելու այն կարևոր գործում, որը պահանջում է մարդկանց միջև փոխներգործություն ուսումնական միջավայրի մշտական գնահատման ու բարելավման համար:

Ժամանակակից տեխնոլոգիաները ուսուցման գործընթացում ունեն իրենց կարևոր նշանակությունը, որոնք ուղղված են կրթության որակի բարձրացմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Թեմայի վերաբերյալ տեսական գրականության ուսումնասիրության ու գիտական վերլուծության, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման, հեռավար ուսուցման հնարավորությունների ուսումնասիրման հիման վրա կատարեցինք հետևյալ եզրակացությունները.

1. մեթոդաբանական մոտեցումների ու տեսությունների վերլուծությունը մեզ թույլ տվեց եզրակացնելու, որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայնածավալ և համակարգված կիրառումը գրականության դասին նպաստում է սովորողների գիտելիքների ու հմտությունների զարգացմանը, ինչպես նաև նոր նյութի ընկալման կարողությունների ձևավորմանը:

2. Ժամանակակից տեխնոլոգիաները կիրառելու համար սովորողը պետք է ձեռք բերի՝

- տեխնոլոգիական միջոցների օգտագործման հմտություններ,
- տեղեկատվական վիթխարի հոսքերում կողմնորոշվելու կարողություն,
- հաղորդակցական մշակույթ:

3.Ներկայումս մեր հանրապետությունում դասավանդումը պետք է իրականացնել տեխնոլոգիական մոտեցումների հիման վրա՝ շեշտադրելով միջմշակութային կապերը և տարբեր մշակույթների փոխներգործությունը, ինչն այսօր հնարավոր է ապահովել ուսուցման գործընթացում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Տեխնոլոգիաների վերը նշված գործառութային նշանակությունը համապատասխանում է սովորողների իմացական գործունեության կազմակերպման փուլերի հիմնավորված հաջորդականությանը՝ ընկալում, գիտելիքների իմաստավորված յուրացում և ամրապնդում, անձնական փորձի ձևավորում (կարողություններ, մասնագիտական հմտություններ), հետազոտական ու որոնողական գործունեություն: Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման կարևոր հիմնախնդիրներից է դասավանդողի կողմից յուրաքանչյուր սովորողին ուսումնական գործունեության ընթացքում անհատական աջակցության կազմակերպումը: Դասավանդողի անձնային որակները բացառիկ նշանակություն ունեն ուսումնադաստիարակչական գործընթացում:

Շատ կարևոր է նաև ժամանակահատվածի անհատական բաշխումը, նյութի յուրացման արագության կարգավորումը՝ ըստ սովորողի ընդունակությունների ու հնարավորությունների: Ժամանակակից տեխնոլոգիական միջոցները դասավանդողի ու սովորողի հարաբերությունները դարձնում են օպերատիվ, արդյունավետ ու մատչելի: Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման ժամանակ ձևավորվում են հաղորդակցական կարողություններ, թիմում աշխատելու կարողություններ, փոխօգնություն, աջակցություն, հանդուրժողականություն, համակեցություն և խմբի համար պատասխանատվություն կրելու կարողություն:

Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ժամանակակից ուսուցման համակարգերը ներկայումս ուսուցման առավել արդյունավետ միջոցներից են: Հատկապես այս պարագայում է լիարժեքորեն իրականանում դասավանդման մեթոդիկայի հին, բայց ժամանակով ստուգված սկզբունքը՝ լավ է մեկ անգամ տեսնել, քան հարյուր անգամ լսել

Օրվա դասի պլան

Ուսուցիչ՝ Պետրոսյան Ռ.
Ամիս,ամսաթիվ «08 » 09 2023թ
Դասարան VI **սովորողների թիվ** 11
Դասի թեմա «Կյանքը հին Հռոմ. Ճան. վրա» Բառագիտ.
Դասի նպատակ Ընկալել տալ ընտ. Հարաբերություններում բարձր արժեքները:Բառի գործածության հետ կապված գիտելիքի ընդլայնում
Վերջնարդյունքը Վերարտադրել ստեղծագործության բովանդակությունը, բնութագրել հերոսներին: Իմանա՝ ինչ է բառը, որն է հիմնական բառապաշարը
Դասի ընթացքը Հանձնարարված էր պատմել թեման,աշակերտները հարցերին պատասխանելուց հետո պատմեն դասը, ստուգեն տնային հանձնարարությունը,կատարեն ուղղումներ:Կատարեն տրված վարժությունները, ստուգեն կատարած աղխատանքը:
Տնային հանձնարարություն Վարժ 8 (բ) 9 (բ,գ), բացատրել տն. աշխ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լ.Վ.Գևորգյան, Ժամանակակից մանկավարժական ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները, Մանկավարժություն, 2015, 79 էջ:
2. Ս. Խաչատրյան , Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ: